

ՀԱՇՎԵՏՈՒ ԶԵԿՈՒՅՑ

03.02.2012 թ.

Մեծարգո մարզպետ, սիրելի լուսակոնքցիներ, համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի Ձեզ ենք ներկայացնում մեկ տարվա ընթացքում իմ կողմից կատարված աշխատանքները:

2011թ. բյուջեն նախատեսվել է 25,516.0 հազար դրամ, նախորդ 2010թ. համեմատ աճը կազմել է 1.432.3 հազար դրամ կամ 0.05 %-ով աճ:

Բյուջեն մեկ տարվա ընթացքում կատարվել է 25.952.364 հազար դրամ կամ բյուջեի 101.7%-ը:

Բյուջեի եկամուտները ըստ հոդվածների հետևյալն է:

Ն/Ն	Եկամուտների անվանումը	Նախատեսված	Փաստացի կատարված	Կատարման %-ը
1	Հողի հարկ գյուղ. նշանակության	2.655.4	2.776.7	104.6
2	Գ/հ կազմակերպություն	—	49.4	—
3	Գ/հ ֆիզիկական անձանցից	942.0	974.2	103.4
4	Տեղական տուրքեր	84.0	47.95	57.08
5	Վարձակալական հողեր	442.4	534.6	120.8
6	Ֆոնդային բյուջե			

Բյուջեի ծախսերը ըստ հոդվածների այդ թվում`

1. Աշխատավարձ 14.116.8 հազար դրամ
սոց հատկացում 2.965.4 հազար դրամ
2. Նախորդ տարիների պարտքի մարում` աշխատավարձ 0 հազար դրամ, սոց հատկացում 0 հազար դրամ:
3. Օգնություն անապահով ընտանիքներին` 1.250.0 հազար դրամի :

4.Մինչև օրս ստացվել է 50 դիմումներ տարբեր բնույթի, որից տրվել է դրամական օգնություն 44 ընտանիքների՝ Մեկ ընտանիք հայրենական պատերազմի հաշմանդամ ստացել է 120.000 հազար դրամ, Քսան մեկ ընտանիք ստացել են յուրաքանչյուրն 30.000 հազար դրամ, Տասնմեկ ընտանիք յուրաքանչյուրն 20.000 դրամ, Երեք ընտանիք յուրաքանչյուրը 35.000 հազար դրամ, հինգ ընտանիքի յուրաքանչյուրը 10.000 հազար դրամ, երկու ընտանիք յուրաքանչյուրը 50.000 հազար դրամ, և մեկ ընտանիք 25.000 հազար դրամ օգնություն , 6 քաղաքացու օգնություն է տրվել բնամթերքի տեսքով:

2011թ. ընացքում անցկացվել է ավագանու 9 նիստ:

2011թ. ընթացքում իրականացված ծրագրերը՝

5.2011թ. շահագործման անցավ 2009թ-ին անավարտ մնացած Լուսակունք-Վանևան խմելու ջրի ջրագիծը:

6.2011թ. «Վորլդ Վիժն»-ի կողմից մանկապարտեզի վերանորոգման համար ծախսվեց 2.540 հազար դրամ, իսկ գույքի ձեռքբերման համար 1.471 հազար դրամի աշխատանքներ:

7.Ավարտվեց և շահագործման անցավ 2011թ. նախատեսված Բ-1 և Բ-2 երրորդ կարգի ջրանցքների անցկացում հազարամյակի մարտահրավեր ծրագրով:

Համայնքի կառուցապատման, կանաչապատման և սանիտարական մաքրման հարցի լուծումը պետք է կատարենք համայնքի ազգաբնակչության հետ միասին:

Համայնքի ղեկավար՝

Խ.Խաչատրյան